ՀԱՎԵԼՎԱԾ ՉՈՐՍ
ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ինձ այնքան էլ չեն մտահոգում հավատքի հանգանակները կամ դավանությունները: Ես նախընտրում եմ հռչակել հենց Աստվածաշունչը: Սակայն գիտակցում եմ, որ հստակ ձևավորված հավատքի դավանությունները այն մարդկանց, ովքեր չեն ճանաչում ինձ, թույլ կտան գնահատելու իմ վարդապետական հայացքները: Մեր օրերում աստվածաբանական այնքան շատ սխալներ ու շփոթություններ կան, որ կարևոր եմ համարում առաջարկել իմ աստվածաբանության հետևյալ համառոտ վերլուծությունը:

1. Աստվածաշունչը՝ թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանները, ներշնչված, անսխալական, հեղինակային, հավիտենական Աստծո Խոսքն է: Այն Աստծո ինքնահայտնությունն է, արձանագրված մարդկանց կողմից՝ Իր գերբնական առաջնորդությամբ: Այն հանդիսանում է մեր միակ Աստծո և Նրա նպատակների հստակ ճշմարտության աղբյուրը: Այն նաև մեր հավատքի միակ աղբյուրն է և Իր եկեղեցու ուղեցույցը:
2. Կա միայն մեկ Հավիտենական Աստված, Արարիչ և Փրկիչ: Նա է ամեն ինչի Արարիչը՝ տեսանելի և անտեսանելի: Նա Իրեն հայտնել է որպես սիրող և գթառատ Աստված, չնայած որ Նա նաև արդար և սուրբ է: Նա Իրեն հայտնել է Երեք տարբեր Անձերով՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Նրանք տարբեր անձիք են, սակայն միևնույն էությամբ:
3. Աստված ակտիվորեն վերահսկում է այս աշխարհը: Նա Իր արարչագործության համար հավիտենական ծրագիր ունի, որն անփոփոխ է և այնպես է գործում յուրաքանչյուր անհատի համար, որ թույլ է տալիս մարդուն ունենալու ազատ կամք: Ոչինչ առանց Աստծո գիտության և թույլտվության տեղի չի ունենում, սակայն նա թույլ է տալիս թե՛ հրեշտակներին և թե՛ մարդկանց կատարել իրենց սեփական ընտրությունը: Հիսուսը Հայր Աստծո Ընտրյալ Մարդն է, և մենք բոլորս էլ պոտենցիալ ընտրյալներ ենք: Դեպքերի վերաբերյալ Աստծո կանխագիտությունը չի նշանակում, որ մարդիկ պետք է ամեն բան անենայնպես,ինչպես կանխատեսված է եղել: Մենք բոլորս պատասխանատու ենք մեր մտքերի և գործերի համար:
4. Մարդկությունը չնայած ստեղծվեց Աստծո պատկերով և առանց մեղքի, գերադասեց ըմբոստանալ Աստծո դեմ: Չնայած Ադամին ու Եվային փորձեց գերբնական մի արարած, միևնույն է նրանք պատասխանատու էին իրենց հոժարակամ եսակենտրոնության համար: Նրանց ընբոստությունը ազդեց մարդկության և ամբողջ արարչագործության վրա: Մենք բոլորս Աստծո ողորմության և շնորհքի կարիքն ունենք, թե՛ Ադամի վիճակի մեջ մեր բաժինն ունենալու և թե՛ հոժարակամ ընբոստանալու համար:
5. Աստված հոգացել է մեղավոր մարդկության ներման և վերահաստատման միջոցը: Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Միածին Որդին, մարդացավ, ապրեց անմեղ կյանքով և Իր փոխանորդական մահով վճարեց բոլոր մարդկանց մեղքերի փոխարեն: Նա է միակ ճանապարհը վերահաստատման Աստծո հետ հաղորդակցվելու համար: Նրա կատարած գործին հավատալուց զատ ուրիշ փրկության միջոց չկա:
6. Մեզնից յուրաքանչյուրը անձնապես պետք է ընդունի Աստծո կողմից առաջարկվող ներումը և Հիսուս Քրիստոսի մեջ ունեցած վերստին ծնունդը: Սա տեղի է ունենում Հիսուսիմիջոցով Աստծոխոստումներին հոժարակամ վստահելով և մեղքից հրաժարվելով:
7. Մենք բոլորս կատարելապես ներում ենք ստանում և վերահաստատվում Քրիստոսի վրա ունեցած մեր վստահության և մեղքից ապաշխարության հիման վրա: Այնուամենայնիվ այս նոր փոխհարաբերության կյանքի ապացույցը մեր վերափոխված և վերափախող կյանքն է: Աստծո համար մարդկության նպատակը միայն ինչ-որ մի օրերկինք հասնելը չէ, այլ հիմա Քրիստոսի պես լինելը: Նրանք, ովքեր իրապես փրկված են, թեև երբեմն մեղանչեն, կշարունակեն հավատքի և ապաշխարության մեջ ապրել իրենց ամբողջ կյանքի ընթացքում:
8. Սուրբ Հոգին «երկրորդ Հիսուսն» է: Նա ներկա է այս աշխարհում, կորած մարդկանց Քրիստոսին առաջնորդելու և փրկվածների մեջ Քրիստոսի կերպարը ձևավորելու համար: Հոգու պարգևները տրվում են փրկության ժամանակ: Պարգևները Քրիստոսի կյանքի և ծառայության իմաստն են, որոնք բաժանված են Իր ամբողջ մարմնով մեկ՝ եկեղեցում:

Պարգևները, որոնք հիմնականում Հիսուսի վարվելակերպն ու շարժառիթներն են, պետք է գործադրվեն Սուրբ Հոգու պտուղներով: Հոգին գործում է մեր օրերում ճիշտ այնպես, ինչպես գործում էր աստվածաշնչյան ժամանակներում:

9. Հայրը հարուցյալ Հիսուս Քրիստոսին դրել է ամեն բանի Դատավոր: Նա վերադառնալու է երկիր դատելու ամբողջ մարդկությանը: Նրանք, որ հավատացել են Հիսուսին և որոնց անունները գրված են Գառան Կյանքի Գրքում, Նրա վերադարձի ժամանակ կստանան իրենց հավիտենական փառավորյալ մարմինները: Նրանք հավիտյան Նրա հետ կլինեն: Սակայն նրանք, որ մերժել են արձագանքել Աստծո ճշմարտությանը, հավիտյան բաժանված կլինեն Երրորդություն Աստծո հետ ջերմ հաղորդակցության բերկրանքից: Նրանք կդատապարտվեն Սատանայի և նրա հրեշտակների հետ միասին:

Անշուշտ սա ամբողջը չէ, սակայն հուսով եմ, որ այն ձեզ կտա իմ սրտի աստվածաբանական համն ու հոտը: Ես սիրում եմ այս արտահայտությունը:

«Կարևոր բաներում՝ միաբանություն, երկրորդականում՝ ազատություն, իսկ ամեն ինչում՝ սեր»: